# Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

## Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարան

**«Ռուս-Հայկական համալսարանի «Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման» կրթական և գիտական գերազանցության կենտրոն» ծրագիր**

2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ և 2019թ. օգոստոսի 1-ից մինչև 2021թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակաշրջան

# Բովանդակություն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 6 |
| Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն | 7 |
| Ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն | 8 |
| Դրամաշնորհային գործառնական հաշվի հաշվետվություն | 9 |
| Համաֆինանսավորման գործառնական հաշվի հաշվետվություն | 10 |
| Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 11 |

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

**Grant Thornton CJSC**
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի ղեկավարությանը

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակներում ֆինանսավորվող «Ռուս-Հայկական համալսարանի «Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման» կրթական և գիտական գերազանցության կենտրոն» դրամաշնորհային ծրագրի (Ծրագիր) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ, ինչպես նաև 2019թ. օգոստոսի 1-ից մինչև 2021թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակաշրջանի Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին, ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին, Դրամաշնորհային գործառնական հաշվի և Համաֆինանսավորման գործառնական հաշվի հաշվետվությունները, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ «Ռուս-Հայկական համալսարանի «Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման» կրթական և գիտական գերազանցության կենտրոն» դրամաշնորհային ծրագրի ֆինանսական վիճակի և 2019թ. օգոստոսի 1-ից մինչև 2021թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Դրամաշնորհային 17/19-CIF պայմանագրի և ՆՄՀ ղեկավար ձեռնարկի համապատասխան հոդվածների:

*Կարծիքի հիմք*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար" բաժնում: Մենք անկախ ենք Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանից (ՌՀՀ) Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների

աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Հանգամանքի շեշտադրում*

Մենք ուշադրություն ենք հրավիրում դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից 2-րդ ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի ղեկավարությանը՝ ՆՄՀ պահանջներին համապատասխանելու համար՝ հիմնված Համաշխարհային Բանկի Կրթության բարելավում ծրագրի վրա: Ուստի, դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող օգտագործվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար*

Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանի (ՌՀՀ) ղեկավարությունը պատասխանատու է սույն դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Դրամաշնորհային 17/19-CIF պայմանագրի և ՆՄՀ գործարկման ղեկավար ձեռնարկի համապատասխան հոդվածներին համաձայն դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

Grant Thornton

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե ՌՀՀ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Գնահատում ենք դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

2021թ. սեպտեմբերի 30

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ՀՀ դրամ

| | Ծանոթ. | 2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| *Ակտիվներ* | | |
| Դրամաշնորհային ծրագրի կուտակային ծախսեր | | 102,995,861 |
| Ընդամենը ակտիվներ | | 102,995,861 |
| *Ֆոնդեր և պարտավորություններ* | | |
| Դրամաշնորհային ծրագրի կուտակային ֆինանսավորում | 4 | 102,238,078 |
| Այլ եկամուտ | | 757,783 |
| Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ | | 102,995,861 |

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. սեպտեմբերի 30-ին

Արմեն Դարբինյան
Ռեկտոր

Արման Ամրոյան
Գլխավոր հաշվապահ

Այս ծրագրի հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 15-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ, ինչպես նաև 2019թ. օգոստոսի 1-ից մինչև 2021թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակաշրջան

ՀՀ դրամ

| | Փաստացի | | Պլանավորված | | Տարբերություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ժամանա-կաշրջանի համար | 2021թ օգոստոսի 31-ի դրությամբ | Ժամանա-կաշրջանի համար | 2021թ օգոստոսի 31-ի դրությամբ | Ժամանա-կաշրջանի համար | 2021թ օգոստոսի 31-ի դրությամբ |
| *Ստացված ֆինանսավորում* | | | | | | |
| Դրամաշնորհային միջոցներ (ծանոթ. 4) | 91,503,081 | 91,503,081 | | | | |
| Համաֆինանսավորման միջոցներ (ծանոթ. 4) | 10,734,997 | 10,734,997 | | | | |
| Այլ եկամուտ | 757,783 | 757,783 | | | | |
| Ընդամենը | 102,995,861 | 102,995,861 | | | | |
| *Ֆինանսավորման օգտագործում* | | | | | | |
| Իրավասու ծախսեր | 102,995,861 | 102,995,861 | 137,117,714 | 137,117,714 | (34,121,853) | (34,121,853) |
| Ընդամենը | 102,995,861 | 102,995,861 | 137,117,714 | 137,117,714 | (34,121,853) | (34,121,853) |
| Շրջանառու կապիտալի զուտ աճ | - | - | | | | |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 15-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

2019թ. օգոստոսի 1-ից մինչև 2021թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակաշրջան

ՀՀ դրամ

| # | Ծախսատեսակ | Նախահաշվով նախատեսված ծախսեր | | | Փաստացի կատարված ծախսեր | | | Տարբերություն | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դրամաշնորհ | Համաֆի-նանսա-վորում | Ընդամենը | Դրամաշնորհ | Համաֆի-նանսա-վորում | Ընդամենը | Դրամաշնորհ | Համաֆի-նանսա-վորում | Ընդամենը |
| 1 | Համակարգչային սարքավորումներ | 7,550,336 | 885,794 | 8,436,130 | 6,850,330 | 803,670 | 7,654,000 | 700,006 | 82,124 | 782,130 |
| 2 | Գրենական պիտույքներ | 476,646 | 55,919 | 532,565 | 343,131 | 40,255 | 383,386 | 133,515 | 15,664 | 149,179 |
| 3 | Լաբորատոր սաքավորումներ և հարմարանքներ | 96,569,909 | 11,329,430 | 107,899,339 | 70,330,888 | 8,251,109 | 78,581,997 | 26,239,021 | 3,078,321 | 29,317,342 |
| 4 | Համակարգչային և այլ սարքավորումներ | 2,637,135 | 309,385 | 2,946,520 | 1,966,986 | 230,764 | 2,197,750 | 670,149 | 78,621 | 748,770 |
| 5 | Սեմինարների, ախխատաժողովների, վերապատրաստումների կազմակերպում | 2,013,750 | 236,250 | 2,250,000 | - | - | - | 2,013,750 | 236,250 | 2,250,000 |
| 6 | Խորհրդատվական ծառայություններ (ազգային և միջազգային) | 1,288,800 | 151,200 | 1,440,000 | 1,288,800 | 151,200 | 1,440,000 | - | - | - |
| 7 | Գործուղում փորձի ձեռքբերման նպատակով | 1,757,028 | 206,132 | 1,963,160 | 1,173,101 | 137,627 | 1,310,728 | 583,927 | 68,505 | 652,432 |
| 8 | ՆՄՀ ծրագրի աշխատակազմի աշխատավարձ | 10,203,000 | 1,197,000 | 11,400,000 | 10,203,000 | 1,197,000 | 11,400,000 | - | - | - |
| 9 | Այլ ծախսեր | 223,750 | 26,250 | 250,000 | 25,060 | 2,940 | 28,000 | 198,690 | 23,310 | 222,000 |
| | Ընդամենը | 122,720,354 | 14,397,360 | 137,117,714 | 92,181,296 | 10,814,565 | 102,995,861 | 30,539,058 | 3,582,795 | 34,121,853 |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 15-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամաշնորհային գործառնական հաշվի հաշվետվություն

ՀՀ դրամ

| | | |
|---|---|---|
| Սկզբնական մնացորդ 2019թ. օգոստոսի 1-ի դրությամբ | | - |
| Ավելացնել. Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն | - | |
| Դրամաշնորհի ստացում ժամանակաշրջանի ընթացքում | 94,381,148 | |
| | 94,381,148 | 94,381,148 |
| Նվազեցնել. ԾԻԳ-ին ետ փոխանցում ժամանակաշրջանի ընթացքում | | (2,878,067) |
| Դրամաշնորհային գործառնական հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1) | | 91,503,081 |
| Վերջնական մնացորդ 2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ | | - |
| Ավելացնել.Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար | 91,503,081 | |
| | 91,503,081 | 91,503,081 |
| Ընդամենը հաշվառված կանխավճար (2) | | 91,503,081 |
| Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2) | | - |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 15-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Համաֆինանսավորման գործառնական հաշվի հաշվետվություն

ՀՀ դրամ

| | | |
|---|---|---|
| Սկզբնական մնացորդ 2019թ. օգոստոսի 1-ի դրությամբ | | - |
| Ավելացնել.Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն | | - |
| Համաֆինանսավորման ստացում ժամանակաշրջանի ընթացքում | 15,590,894 | |
| | 15,590,894 | 15,590,894 |
| Նվազեցնել. ՌՀՀ-ի այլ հաշվին ետ փոխանցում ժամանակաշրջանի ընթացքում | | (4,855,897) |
| Համաֆինանսավորման գործառնական հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1) | | 10,734,997 |
| Վերջնական մնացորդ 2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ | | - |
| Ավելացնել. Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար | 10,734,997 | |
| | 10,734,997 | 10,734,997 |
| Ընդամենը հաշվառված կանխավճար (2) | | 10,734,997 |
| Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2) | | - |

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 15-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանը (ՌՀՀ) հիմնադրվել է 1997թ.-ի օգոստոսի 29-ին Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարությունների միջև Մոսկվայում ստորագրված Երևան քաղաքում ՌՀՀ հիմնադրման և գործունեության պայմանների մասին համաձայնագրի հիման վրա: 1997թ. նոյեմբերի 28-ին ընդունվել է ՀՀ կառավարության թիվ 543 որոշումը Երևանում ՌՀՀ հիմնադրման մասին: Այնուհետև հրապարակվել է ՌԴ ընդհանուր և մասնագիտական կրթության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության 1998թ. հուլիսի 1-ի թիվ 1769/170-Մ համատեղ հրամանը ՀՀ-ում ՌՀՀ հիմնադրելու մասին: 2003թ. ապրիլի 23-ին Մոսկվայում ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև ստորագրվել է փաստաթուղթ 1997թ. օգոստոսի 29-ի՝ Երևան քաղաքում Հայ-Ռուսական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ՌՀՀ հիմնական խնդիրներն են.

- անձի կրթական պահանջների բավարարումը, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների՝ հումանիտար, բնագիտական, տնտեսագիտական, իրավաբանական ուղղվածության գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումը,
- ՌԴ և ՀՀ գիտամանկավարժական կադրերին համալսարանի գործունեությանը ներգրավելով՝ երկու պետությունների գիտական և կադրային ներուժի զարգացմանը խթանելը,
- առաջատար գիտամեթոդական տեխնոլոգիաների կիրառումը, ՌԴ և ՀՀ կրթության ու գիտության բնագավառում կուտակված ձեռքբերումների և փորձի օգտագործումը,
- երկու պետությունների ժողովուրդների մշակույթի, լեզվի, պատմական և ազգային ավանդույթների պահպանմանը, զարգացմանը և փոխհարստացմանը նպաստելը:

ՌՀՀ-ին կից գործում է հոգաբարձուների խորհուրդ: Հոգաբարձուների խորհուրդը կոչված է աջակցելու գիտական խորհրդին և ռեկտորատին ծրագրերի իրականացման գործում:

Համաձայն ՌՀՀ-ի և «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի (ԾԻԳ) միջև 2019թ. հուլիսի 30-ին կնքված Դրամաշնորհային 17/19 CIF պայմանագրի (Պայմանագիր)՝ ՌՀՀ-ն իրականացնում է «Հայ-Ռուսական համալսարանի «Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման» կրթական և գիտական գերազանցության կենտրոն» դրամաշնորհային ծրագիրը (Ծրագիր): Ծրագրի բյուջեն կազմում է 137,117,714 դրամ, որից 122,720,354 դրամը դրամաշնորհային միջոցներից, իսկ 14,397,360 դրամը՝ ՌՀՀ համաֆինանսավորման միջոցներից:

Ծրագրի նպատակն է ՌՀՀ Կենսաբժշկության և ֆարմացիայի ինստիտուտի հենքի վրա ստեղծել «Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման» կրթական և գիտական գերազանցության կենտրոն, որը կխթանի ՌՀՀ-ի, այլ բուհերի, կենսաբժշկական ոլորտի գիտական և տեխնոլոգիական կազմակերպությունների զարգացումը, ազգային և միջազգային համագործակցությունը, կրթական, գիտահետազոտական և նորարարական գործունեությունը:

Ծրագրի առանձնահատուկ նպատակներն են.

- ստեղծել միջազգային չափանիշներին համապատասխան նորարարական գերազանցության կենտրոն, որն իր ներուժով, ենթակառուցվածքով և գիտակրթական ազդեցությամբ առաջատար դիրքեր կզբաղեցնի Հայաստանում և տարածաշրջանում, կհանդիսանա բուհերը, գործարար կազմակերպությունները և գիտական ինստիտուտները միավորող հարթակ,
- մշակել երկլեզու «Գենային ճարտարագիտություն» մագիստրոսական հետազոտական կրթական ծրագիր, ինչը թույլ կտա բավարարել ձևավորվող աշխատաշուկայում բարձրորակ մասնագետների պահանջարկը,
- էապես բարձրացնել առկա կրթական ծրագրերի որակը, մշակել/ներդնել նոր առարկայական և կիրառական ծրագրեր՝ միջազգային նորագույն միտումներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ինչը թույլ կտա շրջանավարտներին գտնել մասնագիտական հմտություններին առավել համապատասխան աշխատանք և ունենալ մասնագիտական աճ,
- իրականացնել ավարտական և թեկնածուական հետազոտական աշխատանքներ կենտրոնի հենքի վրա՝ այդպիսով նպաստելով առավել արդիական գիտական թեմաների ընտրությանը, գիտական նոր արդյունքների ձեռքբերմանը,
- արդիականացնել և ընդլայնել առողջապահության գերակա ոլորտներում հետազոտությունները, ինչը կնպաստի գիտական արդյունքների որակի բարձրացմանը, տպագրված աշխատանքների ծավալի մեծացմանը, ստացված արդյունքների հնարավոր ներդրմանը և նոր միջազգային համագործակցության հնարավորությունների ստեղծմանը,
- խթանել ՌՀՀ-ի և մասնավոր հատվածի համագործակցությունը՝ առավելագույնս խթանելով գիտական արդյունքների ներդրումն ու առևտրայնացումը և պատրաստելով աշխատաշուկայի պահանջներին բավարարող մասնագետներ,
- ստեղծել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստման նոր հնարավորություններ՝ նպաստելով հմտությունների զարգացմանը, նոր գիտելիքների ձեռքբերմանը և կիրառմանը կրթական և գիտահետազոտական գործընթացում:

ՌՀՀ գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ կապված աշխատակիցների քանակը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 4:

# 2 Պատրաստման հիմքերը

## 2.1 Համապատասխանություն

Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, ինչպես նաև Դրամաշնորհային 17/19 CIF պայմանագրի և ՆՄՀ ղեկավար ձեռնարկի համապատասխան հոդվածների պահանջներին համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

## 2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է ՌՀՀ գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և ՌՀՀ գործարքների տնտեսական բովանդակությունը: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա միավորը:

## 2.3 Դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորում

Պայմանագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Դրամաշնորհային ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ծրագրի ավարտի դրությամբ չօգտագործված, ետ վճարված կամ ետ վճարման ենթակա գումարը նվազեցվում է «Դրամաշնորհային ծրագրի կուտակային ֆինանսավորում» գումարից: Ի լրումն՝ ժամանակաշրջանի ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին մասին հաշվետվությունում:

## 2.4 Դրամաշնորհային ծրագրի ծախսեր

Դրամաշնորհային ծրագրի ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Դրամաշնորհային ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ոչ ընթացիկ ակտիվներում: Ի հավելումն՝ ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի հիմնական հոդվածների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռքբերված և ծախսերում ներառված գույքը և սարքավորումները հանդիսանում են ՌՀՀ սեփականությունը: Ծրագրի շրջանակներում ձեռքբերված հիմնական միջոցների տարրերը չեն ճանաչվում որպես այդպիսին և դրանց նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում: Փոխարենը դրանց սկզբնական արժեքը բացահայտվել է ծանոթագրություն 6-ում:

## 2.5 Պլանավորված ծախսեր

Դրամաշնորհային ծրագրի պլանավորված ծախսերն իրենցից ներկայացնում են դրամաշնորհային պայմանագրով նախատեսված ծրագրի ընդհանուր բյուջեն, որը բաղկացած է դրամաշնորհային միջոցներից և համաֆինանսավորումից:

# 3 Դրամաշնորհային ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն դրամաշնորհային պայմանագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. օգոստոսի 31-ը:

## 4 Դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորում

| ՀՀ դրամ | 2019թ. օգոստոսի 1-ից մինչև 2021թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար |
|---|---|
| Դրամաշնորհային միջոցներ | |
| ԾԻԳ-ի ֆինանսավորման միջոցներ | 94,381,148 |
| Ետ վճարված գումար | (2,878,067) |
| | 91,503,081 |
| Համաֆինանսավորման միջոցներ | |
| ՌՀՀ համաֆինանսավորում | 15,590,894 |
| Ետ վճարված գումար | (4,855,897) |
| | 10,734,997 |
| Ընդամենը | 102,238,078 |

## 5 ԾԻԳ-ի կողմից տրամադրված դրամաշնորհային միջոցների և ՌՀՀ կողմից փոխհատուցումների համադրում

| ՀՀ դրամ | ՌՀՀ | ԾԻԳ | Տարբերություն |
|---|---|---|---|
| Փուլ 1 | 24,517,174 | 24,517,174 | - |
| Փուլ 2 | 34,583,539 | 34,583,539 | - |
| Փուլ 3 | 20,451,490 | 20,451,490 | - |
| Փուլ 4 | 14,828,945 | 14,828,945 | - |
| | 94,381,148 | 94,381,148 | - |
| Ետ վճարված գումար | (2,878,067) | (2,878,067) | - |
| | 91,503,081 | 91,503,081 | - |

# 6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների տարրերը բաղկացած են Ծրագրի շրջանակներում ձեռքբերված գույքից, համակարգչային, լաբորատոր և այլ սարքավորումներից, դրանց նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում:

Ձեռքբերված և ծախսերում ներառված հիմնական միջոցները հանդիսանում են ՌՀՀ սեփականությունը:

Ծրագրի շրջանակներում գնված հիմնական միջոցներն ըստ պատկանելիության ներկայացված են ստորև.

| ՀՀ դրամ | 2021թ. օգոստոսի 31-ի դրությամբ |
|---|---|
| Համակարգչային տեխնիկա | 1,945,750 |
| Գրասենյակային գույք և կահույք | 7,654,000 |
| Լաբորատոր սարքավորումներ | 72,028,777 |
| Այլ | 317,999 |
| | 81,946,526 |